

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ԵՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՐՅԸ

Գրեց. Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երևանի Պետ. Համալսարանի  
Իրավաբանական քաժամուկի  
դասախոս

Քը: (Մեծտունարտունայա փրաւա, Ս., հրատ. Մեծտունարտունայա օճնոշննիյէ, 1964 Ք., էջ 196)

«Սահմանային անձեռնմխելիութեան ըսկըրունքը չի ժխտեր ինքնորոշման հիմքի վրայ սահմանային փոփոխութիւնները, կը բացատուի ոչ միայն բռնի միացումը, այլեւ բռնի պահպանումը ազդի մը այլ պետութեան սահմաններու մէջ, այդ իսկ պատճառով օրինական եւ իրաւականօրէն հիմնաւորուած են սահմանային այն փոփոխութիւնները, որոնք կ'առաջանան ի հետեւանք պայքարող ժողովուրդներու ազգային ազատագրութեան պայքարին, եւ զաղութային այլազդի պետութեան փոխարինումը նոր ազգային պետութեամբ: (Անդ, էջ 197)

«Սահմանային անձեռնմխելիութեան ըսկըրունքը կը բացառէ անդամահատումը կամ հողի յախշտակումը ուժային միջոցներով եւ կամ սպառնալիքներու օղնութեամբ:

Սակայն այդ իրաւունքը ճանչնալով չի բացառեր արդար սահմանային փոփոխութեանց հնարաւորութիւնը: Այս կամ այն պետութեան սահմանային անձեռնմխելիութիւնը պէտք է չըփոխել սահմանային անփոխաւթիւթեամբ, պետութիւններու սահմանային անձեռնմխելիութեան պահպանումը անհրաժեշտ է զիտել ազգերու ինքնորոշման շրջալիծին մէջ: Բացի այդ, սահմանային հարցեր լուծելու ժամանակ պէտք է նաեւ նկատի ունենալ տուեալ պետութեան ապահովութեան եւ անվտանգութեան հարցերը, ինչպէս նաեւ տուեալ հողամասի բնակչութեան պատմական իրաւունքները: (Մեծտունարտունայա փրաւա, Ս. հրատ. Եւրիտիչսաբայա լիթերաբուրա, 1964, էջ 179)

«Օրինական են միայն այն սահմանային տարածքային փոփոխութիւնները, որոնք կ'առաջանան ի հետեւանք ազգային - ազատագրական պայքարի, առաջացումով ինքնանկախ պետութեան մը, ցիրուցան եղած ազդի վերամիացումը հայրենիքին, մէկ պետութեան մը կողմէ բարեհաճ եւ անփոխաղարձ զիջումը հողաշերտի մը այլ պետութեան փոխաղարձարար սահմանային ճշգրտումներու համար, որոնք առաւելագոյնս կը համապատասխանեն ազգային ինքնորոշման սկզբունքին»:

Միջազգային յարաբերութիւններու մէջ վերջին տարիներուն հանրայնտ են բազմաթիւ փաստեր, որոնք կ'ապացուցանեն պետական տարածքային փոփոխութիւններ՝ համապատասխան ազգային ինքնորոշման սկզբունքին: Այսպէս, որպէս հետեւանք ազգային - ազատագրական պայքարներու, 1959 - 1963 թուականներուն անկախացման այնպիսի երկիրներ ինչպիսիք են Քոնկոն, Նիկերիան, Մալին, Թոկոն, Քեմերոնը, Սոմալին, Կիպրոսը, Ալճերիան, Քեմերիան, Թանկանիքան եւ այլ բազմաթիւ երկիրներ: Փորթուկալական զաղութիւնները վերջնականօրէն հեռացուցան հնդկական հողերէն (Կոալ Տաման, Տիւու), 1961-ին, որուն հետեւանքով ոչնչացան զաղութատիրական վերջին օճախները այս երկրին մէջ (Անդ, էջ 181):

«Արդի միջազգային օրէնքը կը ճանչնայ հնարաւորութիւնը եւ անհրաժեշտութիւնը հողային փոփոխութիւններու, համապատասխան հաստատուած հիմնազրոյթի՝ ազգերու ինքնորոշման սկզբունքին: Պետութիւններու ինքնանկախութիւնը, անոնց հողատարածքային պերիշտանութիւնը չեն կրնար հակադրուիլ ազգային ինքնորոշման, հիմք ճառայել եւ ճնշելու գայն. ազգային ինքնիշխանութիւնը պէտք է հիմք հանդիսանայ պետական ինքնիշխանութեան: (Քուրս մեծտունարտունայա փրաւա, հատ. 3, Ս., հրատ. Նաուխ, 1967, էջ 126):

«Հողատարածքը նուաճումն է պայմանականօրէն, աշխարհապրական տուեալ սահմաններու մէջ, խումբ մը մարդոց՝ այսինքն իրենց բընիկներուն համատեղ կեանքին: Մարդկային հասարակութեան զարգացման բնթացքին առաջացած էր ձիւ-ազգային-տարածքային հասկացողութիւնը կը հանդիսանայ նուաճումը որոշակի հողային տարածութեան վրայ բնակող համապատասխան ազգի, ազգութեան կամ ժողովուրդի: Պատմականօրէն առաջացած որոշ հողամասի պատկանելիութիւնը իր մարդկային հասարականութեան չի կրնար անուշագրութեան մատնուիլ տուեալ տարածքին պետականութիւնը որոշելու ժամանակ: Պետութիւն մը իրաւունքը ունի տէրը բլալու իր տարածքին, միայն այն ժամանակ, եթէ այդ կը հանդիսանայ կազմա-

«Կոմունիստ» օրաթերթ, Երևան, 20 Գեկտ. 1989, Քիւ 292

Ռուսերէնէ բարգմանեց՝ ՏՈՒՔԹ. Պ. ՊՈՅԱՃԱՆ

(Շար.ը տեսնել Գ. էջ)

Լեւոնային Ղարաբաղի հարցի ողբերգական իրադատութիւնը կը հանդիսանայ այն՝ որ ամէն անգամ որ բնիկ հայ ժողովուրդը առաջ քաշած է իր հիմնահարցը ի զին մեծ ջանքերու ծանօթացնելու շահապրդիւ պետութիւններուն, վերամիացման կապակցութեամբ, վճռական վարկեանին դուրս մնացած է իր իսկ հարցի լուծմանը մասնակցելէ: Այդպէս պատահեցաւ յ Յունիս 1921-ին, երբ Կովկասեան Բիււոն, հանդիսանալով կուսակցական կազմակերպութիւն, իր Տ հոդինոց անձեռնկաղմով, չունենալով որեւէ լիազօրութիւն, եւ առանց հաշուի նստելու ինչպէս զարարադահայութեան՝ այնպէս ալ Հայաստանի կառավարութեան կարծիքին հետ, այդ հողաշերտը յանձնեց Ատրպէյճանին:

Յետագային նոյն պատմութիւնը կըրկնուեցաւ բազմիցս: Այդպէս պատահեցաւ նաեւ 1989 Նոյեմբեր 28-ին, երբ ԽՍՀՄ-ի Գերագոյն Խորհուրդը խախտելով խորհրդարանային տարրական չափանիշերը կարողացաւ անցընել որոշում մը՝ «Լեւոնային Ղարաբաղի իրավիճակը կարգաւորելու միջոցառումներ ժասին», որուն նպատակը, արցախահայութեան ազատագրական շարժումը ճնշելն էր: Ժողովուրդ՝ որ հատուցած վերակառուցման, հաւատացած դեկավարութեան ճշմարտացիութեան՝ իրաւական պետութիւն կառուցելու: Ղեկավարուելով իր ինքնորոշման իրաւունքով, այն է ազգերու եւ ժողովուրդներու իրենց իսկ ճակատագիրը տնօրինելու իրաւունքը, արդէն երկու տարի է որ իրողպէս Ղարաբաղը դուրս եկած է Ատրպէյճանէն, իղելով վերջինին հետ ամէն տեսակի՝ եւ իրաւական եւ քաղաքական կապերը:

Այսպիսով, Լեւոնային Ղարաբաղի հայութեան, որ կը կազմէ ազգաբնակչութեան 80 տոկոսը, կրկին անգամ մերժուեցաւ, միութեանական դաշնակցութեան շրջանակներու մէջ ինքնորոշուելու իրաւունքը: Այս կապակցութեամբ անհրաժեշտութիւն կը նկատեմ ընթերցողներու դատին ներկայացնելու միջազգային իրաւունքի մասին խորհրդային դասազրիքերէն որոշ հատուածներ, որոնք ուղղակիօրէն կ'առնչուին սոյն հարցին: Միջազգային՝ որովհետեւ ազգերու եւ ժողովուրդներու ինքնորոշուելու իրաւունքը կը հանդիսանայ իրաւական երեւոյթ, որուն իրականացման հիմքի մէջ ինկած է միայն միջազգային օրէնքներու չափանիշերը, սահմանադրական իրաւունքներու չափանիշերը: Ի տարբերութիւն «քաղաքական» լուծումներու, արդի միջազգային օրէնքը ուղղակի, յստակ եւ աներկրայ կը պահանջէ յանդիլ ազգերու եւ ազգութիւններու ինքնորոշուելու իրաւունքը եւ ամէն կերպ նպաստելու անոր իրազորման:

Համապատասխան նիւթերը կը մէջբերեմ առանց մեկնարանութեան, միայն աւելցնեմ, թէ այս դասազրիքերով ուսանած են բազմաթիւ հանրայնտ իրաւագէտներ, այդ դասազրիքերով կ'ուսանին շատեր նաեւ այժմ:

«Թերեւս էրագմ Ռոթերտամցին (1467 - 1536 Ք.) (իրաւական կողմէ ելլելով) ցոյց տուաւ անթոյլատրելիութիւնը բնակեցուած հողի մը յանձնումը մէկ պետութեանէն այլ պետութեան, առանց հաշուի առնելու տուեալ հողատարածքի բնակչութեան ցանկութիւնը, այսպէս մարդիկ կը հաւասարին զոյգի եւ կամ արջառի:

18-րդ դարու վերջերուն միջազգային փորձերն ու օրէնքը, նպատակ ունենալով հաշուի առնելու ազգաբնակչութեան ցանկութիւնը, առաջ քաշեցին փիլիպիցիստը, այսինքն՝ տրուող, առնուող կամ միացող հողաշերտի շուրջ ժողովրդային հանրաքուէն: (Մոսկուա, Եւրիտիչսաբայա իգտաթելսքփօ միւնիստրետսովա եուստիցի էս. էս. էս. էր., էջ 211 - 212):

«Արդի միջազգային օրէնքի տեսանկիւնէն պետութիւններու սահմանները անձեռնմխելի են, պետութեան մը հողային ամբողջականութեան եւ կամ գերակայութեան խախտումը կարելի է զիտել որպէս նախադրածակ զործողութիւն:

Սակայն պետութիւններու հողային անձեռնմխելիութիւնը չի բացառեր հնարաւորութիւնը խաղաղօրէն հողային փոփոխութիւններու: Արդի միջազգային օրէնքը կը ճանչնայ ոչ միայն հնարաւորութիւնը, այլեւ առաջին իրավիճակներու մէջ անհրաժեշտութիւնը սահմանային փոփոխութիւններու, պայմանով որ պահպանուի տուեալ ազգի ինքնորոշման իրաւունքը:

ՄԱԿ-ի կանոնադիրը ոչ մէկ սահմանափակութիւն կը նախատեսէ անդամ պետութիւններու քաղաքական եւ սահմանային խաղաղ փոփոխութիւններու շուրջ, ճանչնալով բոլոր պետութիւններու ինքնորոշութիւնը, ՄԱԿ-ի կանոնադիրը կ'ընդունի նաեւ ազգերու ինքնորոշման իրաւունքը, եւ կը պարտադրէ անգամ պետութիւններու կենսապարձելու այդ իրաւունքը:



(Շարունակուած Գ. էջէն)

կերպուած հասարակութեան մը նուաճումը, երբ ազգային խմբաւորումներ այդ հասարակութեան տուեալ պետութեան մէջ կը մտնեն համապատասխան իրենց ցանկութեան եւ համաձայնութեան : (Անդ , էջ 126 - 127) :

Ազգերու ինքնորոշման իրաւունքը կարեւորագոյն իրաւական հիմքն է տարածքային փոփոխութիւններու համար : Ի հետեւանք ազգային ինքնորոշման կրնան տեղի ունենալ ամենատարբեր հողային փոփոխութիւններ , սկսած մասնակի փոփոխութիւններէն ընդհուպ զղալի տարածքային փոփոխութիւններ՝ նոր պետութեան մը կազմաւորմամբ : (Մեծտունարտունոյէ փրաւա , Ս . հրատ . Եւրփտիչսֆայա Լիթերաթուրա , 1974 , էջ 256) :

«Տարածքային խնդիրներու ժամանակակից լուծման իրաւական հիմքը կը հանդիսանայ ժողովուրդներու եւ ազգերու ինքնորոշման իրաւունքը իր քաղաքական ճակատագրի ինքնորոշումէն ընդհուպ ինքնուրոյն պետականութեան կազմաւորումը :

Ինքնորոշումը իրականացնելու ճանապարհին կրնան տեղի ունենալ տարածքային տարբեր փոփոխութիւններ : Ինքնորոշումը կրնայ յառաջացնել ինչպէս յարաբերական՝ ոչ մեծ , մասնակի պետական տարածքի փոփոխութեան , այնպէս ալ բաւականին մեծ՝ նոր պետութեան մը ստեղծման» (Մեծտունարտունոյէ փրաւա , Ս , հրատ . Եւրփտիչսֆայա Լիթերաթուրա , 1982 , էջ 400) :

«Տարածքային հարցերու լուծումը , ազգերու եւ ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքի սկզբունքի իրականացման ձեւերը , կախուած իրավիճակէն , կրնան տարբերիլ :

Այդ կրնայ տեղի ունենալ տուեալ տարածքի բնակչութեան հանրաքուէով (փլիպիցիստ) : Այսպէս՝ այս եղանակով լուծուեցաւ Սպանիոյ եւ Մեծն Բրիտանիոյ միջեւ վիճելի Ճիպրալթարի հարցը 1967ին : Իբրեւ հետեւանք հանրաքուէի , արեւմտեան Իրիւանը վերամիացման Ինտոնեզիոյ 1969ին :

Կրնայ լուծուիլ նաեւ համազգային իշխանութեան մարմիններու ներկայացուցչական , որոշումով : Այսպէս . Արեւմտեան Ուքրանիոյ Մոկաչևի մէջ 1944 Նոյեմբերի 20ին ժողովրդային կոմիտէներու համազուգարը (իշխանութեան ժամանակաւոր մարմինը) ընդունեց մանիֆեսթ՝ որուն մէջ արտայայտուած էր Անդրկարպատեան Ուքրանիոյ ցանկութիւնը վերամիանալու Խորհրդային Ուքրանիոյ հետ : Այս մանիֆեսթը հանդիսացաւ «իրօրինակ ձեւ մը համաժողովրդային կամքի արտայայտութեան» :

Կ'ուզեմ ծանօթանալ այնպիսի նիւթերու , որոնք կ'ապացուցեն հակառակը , այսինքն՝ ազգ մը կամ ժողովուրդ մը որ հրաժարի իր ինքնորոշման իրաւունքէն՝ զինք կեղեքողին եւ իր վրայ իշխողին շահերուն եւ իրաւունքներուն համար :